ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի ուղերձը

Ուսուցչի օրվա կապակցությամբ

Սիրելի՛ ուսուցիչներ, շնորհավորում եմ ձեզ՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ:

Մեր երկրի տոնացույցի մեջ բազմաթիվ մասնագիտական տոներ կան: Դրանց մեջ Ուսուցչի օրը առանձնանում է նրանով, որ այն մենք բոլորինս ենք համարում, ընկալում իբրեւ համապետական տոն:

Մենք առանձնակի ակնածանքով ենք վերաբերում ուսուցիչներին՝ յուրաքանչյուրս այդ կերպարի մեջ տեսնելով մեր առաջին ուսուցչին, դեպի գիտելիքների աշխարհն ուղեկցող մեր սիրելի մանկավարժներին:

Դուք ձեր իմաստնությամբ ու բարությամբ, համբերատարությամբ ու անձնուրացությամբ կրթում ու դաստիարակում եք մատաղ սերնդին՝ նրանց փոխանցելով ձեր գիտելիքներն ու հմտությունները, ձեր մեծ հոգու մի մասնիկը:

Որքան էլ դժվար ու պատասխանատու լինի ձեր գործը, միեւնույն է, դուք այն կատարում եք անսահման սիրով ու նվիրվածությամբ: Այսօր այն օրն է, երբ մենք այդ ամենի համար մեր գնահատանքն ու երախտիքն ենք արտահայտում:

Սիրելի՛ ուսուցիչներ, կրկին շնորհավորում եմ ձեզ: Մաղթում եմ առողջություն, խաղաղություն, հաջողություններ ու նորանոր ձեռքբերումներ ձեր դժվարին, բայց պատվաբեր ու շնորհակալ գործում: